

տակներնուն վրայ ծանր տուրքեր դնել, կաշառ ուտել, ու բամբասուիլ օտար ազգերէն, ու իրենց ժողովուրդը իրենց թշնամի ընել: Թէ որ չես գիտեր ի՞նչ ըլլալը, ես քեզի ըսեմ: Թագաւորները մարդկանց հետ կը կենցաղավարին, մարդկանցմէ խորհուրդ կը լսեն, իրենք ալ մարդիկ են. ուստի երբեք հպարտութեան համար, երբեք ալ խոհեմութիւննին պակաս ըլլալէն, կը կարծեն ու կը լսեն ալ ուրիշներէն՝ որ հարստութիւնն է իրենց անունը մեծցընողը, յիշատակնին չմնար թէ որ պատերազմ չընեն, ու Հռոմայու կայսեր իրաւունք կը սեպեն՝ բոլոր աշխարհքի տիրելը. աս անիրաւ մտածմունքը՝ իրաւամբ կորսնցընել կու տայ ունեցածնին. կրնային հանգիստ ապրիլ իրենց ունեցած հարստութեամբը, կ'աղքատնան պատերազմ ընելով. կրնային սիրելի ըլլալ ամենուն, ատելի կ'ըլլան. կրնային վայելիլ ապահովապէս իրենց կեանքը, զիրենք վտանգի կը դնեն. ամենքը իրենց կարօտ ըլլալուն տեղը, իրենք ամենուն կարօտ կ'ըլլան: Ի՞նչ փնտրէ կրնային ընել թագաւորութեան մը թշնամիները՝ իր զօրքին ըրածէն ետեւ: Թշնամիները սահմանադուր կը կողոպտեն, մերինները բոլոր տէրութիւնը. անոնց կրնանք դէմ դնել, ասոնց և ոչ կրնանք դէմ խօսիլ. թշնամիները օր մը միայն կու գան կը յափըշտուեն կ'երթան, իսկ մերինները ամեն օր կը գողնան ու միշտ հետերնիս են. անոնք վախ ունին մեզմէ, ասոնք և ոչ կ'ամաչեն: Աւելի կը վախնամ հարիւր զինուորի գունդ մը կազմել, քան թէ յիսուն հազար թշնամեաց դէմ պատերազմ ընել. վասն զի հոն մէկ ժամու մէջ աղէկ կամ գէշ կը լինայ՝ ինչ որ բախտը որոշեր է. իսկ ասոնց հետ բոլոր կեանքս կը մաշի:

Ի՞նչ ընեմ ուրեմն, իմն Կուռնելիէ, ասանկ է ու ասանկ պիտոր ըլլայ. ասանկ գտայ, ասանկ ալ պիտոր թողում: Աստուածները արդար են. որովհետեւ անքանիք անիրաւաբար չարիք կ'ընենք ուրիշներուն երկրին մէջ, իրաւամբ թող

կու տան որ մերիններն ալ մեզի չարիք ընեն: Աս գրածներս քեզի օգուտ մը չեն ըներ, բայց գրելովս կը հանգչիմ: Կը խնդրեմ աստուածներէն որ քեզի բարի կեանք տան, ինծի ալ բարի մահ: Քուկին Մարկոսդ է որ իր Կուռնելիոսին կը գրէ:

Յարմար պատասխան.

Յովսէփ ու Բենեդիկտոս, երկու արուեստաւոր երիտասարդներ, օր մը անցնելով գեղի մը բանջարեղէնի պարտիզի մը քովէն, ըսաւ Յովսէփ իր ընկերոյը. Նայէ Բենեդիկտոս, ի՞նչ մեծ կաղամբ մը կայ աս պարտէզին մէջ, ամենէն չեմ յիշեր որ կենացս մէջ նմանը տեսած ըլլամ: Իրաւցընէ մեծ է, ըսաւ Բենեդիկտոս, բայց ան աստիճանի չէ ինչ որ ես Գաղղիա եղած ատենս մէկ մը տեսեր եմ, որ մեր ժողովրդապետին տնէն ոչ ինչ նուազ պզտիկ էր: — Ան ալ չափազանց է, պատասխանեց Յովսէփ, որ արուեստիւ պղնձագործ էր. սակայն ես ալ կը յիշեմ որ ատենօք սա դիմացի եկեղեցւոյն չափ մեծ կաթսայ մը շիներ եմ: — Ի՞նչ կ'ըսես, կանչեց Բենեդիկտոս զարմանալով մը, ու ի՞նչ միտքդ եկաւ որ ատ մեծ կաթսան շինեցիր: — Քու տեսած կաղամբդ մէջը եփելու համար, պատասխանեց Յովսէփ:

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Վիճակագրականք. — Բարիք քաղաքին հիմակուան բնակիչը իբր 1,800,000 կը հաշուի:

Անցեալ տարուան վիճակագիր ցուցակին մէջ նշանաւոր է հոկտեմբեր ամսուն ծննդոց և վախճանելոց տրուած տեղեկութիւնը որ մայրաքաղաքին քոլերայի բռնուած ամիսն էր: Տարւոյն առջի ինը ամիսներու մէջ ծնունդը միշտ ի վեր էր քան

դմաճը, և միջին Հաշուով՝ 4621 ծնունդ կը համարուէր 5694 մահուան դէմ: Քուլերայն երեւնալուն պէս այս համեմատութիւնը փոխուեր է. 4498 ծննդոց դէմ՝ 8931 եւեր է մահը, որ գրեթէ կրկնապատիկն ըսել է: Այս 8931 վաթսանողներէն 4466ը քուլերայէն մեռնողներն են, և 4483ը այլ և այլ հիւանդութիւններէ: Հիւանդութիւնը 122 օր տեւեր է կամ չորս ամիս, սեպտեմբերի 15ին սկսեր և յունուարի 15ին ճիշդ դադրեր է: Առջի տասնըհինգ օրերը մէյմէկ մահ հանդիպեր է օրը, յետոյ

քանի մը օր բոլորովին դադրեր, ետքը նորէն սկսեր է, բայց հետզհետէ զայրանալով: Իսկ հոկտեմբեր ամսուն 13էն մինչև 22 մեծագոյն կոտորածը եղեր է. բայց այս օրերուն մէջ աւելի սաստկագոյն կէտը եղեր է ամսուն 14ին որ մինչև 391 եւեր է առանց խտրելու քուլերայէն և ուրիշ հիւանդութենէ մեռնողները: Քուլերայէն 4466 մեռնող անձինքներէն 2383ը էրիկ և 2083ը կնիկ մարդ է եղեր. իսկ հասակները այսպիսի կարգաւ.

մինչև 5	տարեկանը՝	394	մանչ և 351	աղջիկ.
5էն 15	տարեկանը՝	185	մանչ և 104	աղջիկ.
15էն 25	տարեկանը՝	369	էրիկ և 247	կնիկ մարդ.
25էն 34	տարեկանը՝	643	էրիկ և 382	կնիկ մարդ.
40էն 50	տարեկանը՝	633	էրիկ և 468	կնիկ մարդ.
60էն վեր		269	էրիկ և 331	կնիկ մարդ.

Հիւանդութեան բովանդակ ժամանակը մեռնողներուն թիւը ընդ ամենը եղեր է իբր 6400. կրնանք այս թիւը նոյն մայրաքաղաքին ուրիշ տարիներուն մէջ եղած կոտորածներուն հետ բաղդատել, և այդ ժանտախտին սաստկութեան ընթացքը հաշուել:

1853-54 տարիներուն քուլերայն տեւեր է 13 ամիս, 1853ին նոյեմբերէն սկսելով մինչև յաջորդ տարւոյն դեկտեմբերը. այս երկայն պարագայիս մէջ վախճանելոց թիւը ՚ի Բարիզ միայն՝ եղեր է 7600:

1849ին որ ապրիլին վերջի կիսոյն մէջ սկսեր և տեւեր է մինչև նոյեմբերի վերջը, որ է ըսել 7 ամիս և տասն օր, մեռեր են 11 000 հոգի:

Իսկ 1852ին քուլերայն որ գրեթէ առաջինը եղաւ ասիական և փոխադրական ախտի կերպարանը ունեցող յեւրոպիա, քշեր է վեց ամիս և քանի մը օր. և Բարիզի մէջ միայն կոտորեր է 16,600 հոգի:

Այս բաղդատութիւնը մեծ նշանակութիւն ունի. թէ որ չկարենանք այս գոհութիւնը ունենալ որ գիտութիւնը կրցեր է այս ահաւոր պատուհասին դարմանը գտնել, գոնէ կրնամք ապահովել զմեզ որ նախազգուշութիւնները և պահեստները կարելի կ'ընեն այս ախտին ուժը զգալի կերպով հեռագնատէ նուազեցունել:

Հետադիւրք. — Տարւոյս յունուարի 1էն ՚ի վեր հեռագրաց վրայ դրուած տրոց նշանակիւր կը յուսացընէ որ աւելի գրգիռ տայ անոնց գործադրութեանը: Ուստիան,

օգուտ չէ համառօտիւ նշանակել հոս թէ հեռագրութիւնը ցորվայր ընդարձակած է իր սահմանները և թէ որոնք են իրեն կը ցորդիչ ճամբաները ընդ Եւրոպայ և ընդ այլ կողմանս աշխարհի ի ներկայումս:

Եւրոպիոյ մէջ ոչ թէ միայն մայրաքաղաքք, այլ և միւս ամենայն քաղաքներ որ քաղաքավարական, արուեստական կամ առևտրական կարևորութիւն մը ունին, հեռագրական ցանցին մէջ մտած են. այս ալ բաւական չէ, այնքան յարգ առած է այս հաղորդակցութեան ճամբան և հետզհետէ այնքան սովորական կ'ըլլայ, որ նաև երկրորդական տեղուանք ալ մասնակից կը ջանան ըլլալ անոր օգտաշահութեանցը, ամենեւին ծախքի մը չխնայելով, որ իրենց մէջն ալ անիկայ հաստատուի:

Ի սկիզբն տարւոյս մօտ 7000 ելեկտրական սենեակ համրուեցաւ բովանդակ Եւրոպիոյ մէջ բացուած:

Երկու գիծ կայ զԵւրոպա ընդ Ափրիկէի միացունող, մէկը Մարսալայէն (Սիւկիլիա) դէպ ՚ի Պիզէրզա (Դունուզ) գացող, ուսկից և յԱլճերի կը խոտորի. և միւսը Մալթայէն ՚ի Պէնիպլի (Դրիբօլի), որ և կ'երկընայ ինչուան յԱղքեսանդրիա (Եգիպտոս) ծովագերեայ գծով:

Այս վերջի երկրորդ գիծը սահմանուած էր որ զԵւրոպան Հնդկաստանի հետ ալ կցորդէ, բայց Արաբիական ծոցոյն յատաւ կին վրայ անհնարին բազմութիւն բուստերու ըլլալուն՝ ելեկտրական շղթան չհամարձակեցան հաւատալու հոն, ուստի և

այս խորհուրդը թողաւ, և ուրիշ ճամբայ մը հարկ եղաւ որ բնտնեն: Ուրեմն Եւրոպայէն դէպի Աւերիկէ գացող գիծը մինչ ցհիսիսային եղբրքն է, անկէ անդին կը կտրի:

Եզիպտոս Եւրոպայի՝ ինչպէս նաև Ասիոյ հետ մէկ ուրիշ գծով մ'ալ միացած է, որ Ատրիքէն կ'անցնի, հանդիպելով Երուսաղէմ, Հալէպ, Գրիբօյի, Պէրուսթ. անկէ կու գայ Ստամպուլ, կ'անցնի Պոսիոլը, և կը միանայ Եւրոպական Տաճկաստանի գծերուն հետ:

Գէպ 'ի Հնդկաստան խրկուած հեռագրութիւնքն կրնան երկու ճամբով ուղևորիլ. մէկը Իտալական թերակրով Օգրանդոյէն (Նարոլի) կ'անցնի 'ի Վալլոնա (Ալպանիա), կը կտրէ Եւրոպիոյ և Ասիոյ Տաճկաստանները, կը հասնի Պարսա՝ Պարսկային ծոցոյն վրայ. հոն ծովընկէց շթաներով Պարսկային ծոցոյն և Օմանի ծոցոյն ջրերուն մէջէն կ'անցնի 'ի Բաւրաբա՝ Հրնդկաց գծին հետ միանալու. — մէկալ ճամբան է այն որ Ռուսիայէն կ'երթայ 'ի Կովկաս, անկէ 'ի Պարսս և անկէ 'ի Պասրա առջի ճամբուն վրայ:

Հնդկաց ցանցը 161 կայարան ունի, որոնց կը Սէյլան կղզւոյն մէջ է:

Գէպ 'ի Չին գացած հեռագրաց ալ ճամբան դարձեալ Ռուսաստանն է. անկէ կ'անցնի 'ի Սիպերիա մինչև 'ի սահմանագլուխն 'ի Քեսհդա, անկէ չինացի թղթատարները կը տանին 'ի Բէքին, որովք 15 օր կ'անցընեն այդ ճամբան ընկելու համար:

Ամերիկայի հետ Եւրոպան դեռ հեռագրով միացած չէ. Ռուսիոյ տէրութիւնը կ'աշխատի հիմա մէկ հատ մը հաստատելու Սիպերիայէն և Պէնզինկի նեղուցէն անցընելով: Սակայն Անգլիական ճարտարութիւնը չէ հրաժարած ատլանդական ծովընկէց շթայէն: — Եթէ հին և եթէ նոր աշխարհքի շատ մը տէրութիւններ միացեալ են այդ խորհուրդը առաջ տանելու, առաջնորդ գործոյն ունենալով զՊր. Պալէստրինի, և քիչ ատենէն ձեռք պիտի զարնեն դարձեալ:

Օրագիրք. — Անգլիական օրագրաց ներկայ 1866 տարւոյն համրանքն այս է. — Ամբողջ Բրիտանիական տէրութեան մէջ 1287 օրագիր կը հրատարակուի. Անգլիայի մասին մէջ 933 հատ, յորոց 226ը 'ի լոնտրա. իսկ 707ը 'ի նահանգսն. Կալէսի երկիրը 43 հատ, Սկովտիա 137, Իրլանտա 128, և Անգլիական կղզիները 14:

— Այս 1287 օրագիրներէն 78 հատը ամենօրեայ է, յորոց 52ը Անգլիա, 1 հատը Կալէսի երկիրը, 12 հատը Սկովտիա, 11ը Իրլանտա և 1ը 'ի կղզիս: — Շտեմարան (magazin) և Հանդէս (revue) ըստած շարաթականները 537 հատ են, յորոց 196ը կրօնական են, վասն կերպ կերպ աշանդոց և վարդապետութեանց:

Այս պատկերը բաղդատելով 1856 տարւոյն հետ ուր ընդ ամենայն 734 օրագիր միայն կը հրատարակուէր, և 35ը միայն օրըստօրեայ, իսկոյն կը տեսնէ մարդ որ ինչ աստիճան ընդարձակութիւն առեր է տպագրութիւնը և ընթերցասիրութիւնը այս վերջի տասը տարուանս մէջ յԱնգլիա:

Հնագիտականք. — Նանսի այժմեան Գեր. Եպիսկոպոսը Լավիժըրի՝ իւրով հրամանաւ վերջի օրերս ազգաբանական քըն, նութեան տակ ձգել տուաւ երկուց սրբոց գանկերը, որ զարմանալի դիպուած մը հանդիպցուցին: — Մանսույի¹ և Կերարտոս² Գաղղիոյ Դուլ քաղաքին եպիսկոպոսունքն էին իբրև զսուրբս պատուեալք, և իրենց գանկերը 'ի միում տըփի զետեղեալ. բայց անուանակիր պիտակները ընկած, չէր գիտցուեր թէ իր գանկը ո՞ր սրբոյն էր:

Պր. Կոտրոն բժիշկը որում յանձնուած էր գործս, առջի տեսութեամբը իսկոյն դատեց որ այդ երկու գանկերէն մէկը ամենեւին կեղտական ցեղի տիպը ունենէր, մինչդեռ միւսը ամենազգալի կերպով անկէ կը զանազանէր և յայտնի էր տարբեր ցեղէ մարդ ըլլալը: Եւ յիրաւի Սուրբն Կերարտոս 'ի ծննդենէ Կեղտ էր, իսկ սուրբն Մանսույի ընդ հակառակն Սկովտիացի. ուստի ամենեւին տարակոյս չէր մնար խընդրոյն. մանաւանդ յետոյ խորհրդածելով այս քննութեան հաստատութիւն կ'ըլլար վկայականին մէջ նշանակեալ մէկ հանգամանքը, որ սրբոյն Մանսույի գանկը չորս ակռա պիտի ունենար, և իրօք այնպէս էր:

Նիմ Գաղղիոյ քաղաքներէն մէկը՝ Նաւոր է գլխաւորապէս իրեն մէջի գլուխուած հռովմէական աւերակօքն, յորս նըշանաւորագոյնն ալ իւր ամբիթէատրոնն է. վերջերս մէջ տեղի ասպարիղին մէջ գլուխ:

1 St. Mansuy.

2 St. Gérard.

նուած մէկ չէնք մը, որ յետին դարերու ձեռագործ էր, կործանելու ատեն, հետաքրքրական արձանագրի մը հանդիպեցան, լատիններէն չղածն տառիւք փորագրեալ քարի մը վրայ, զոր հին չէնքերէն առեր և նոր չէնքին մէջ հիւսեր էին։ Արձանագիրն էր այս ինչ.

T. CRISPUS REBURRUS FECIT.

որ է ըսել՝ Ս. ԿՐԻՍՊՈՍ ՀՌԵԲՐՈՒՌՈՍ ԱՐԱՐ.

Հնագիտաց աներկբայելի կ'երևայ որ այս կրիսպոսի անունը այդ համբաւաւոր ամփոփէտաորոնին ճարտարապետին անունը ըլլայ, և կամ թէ գոնէ գործակատարին (զոր լատինք *redemptor operum* կ'ըսէին որ է վերակացոյ քործոց, և արդիւր ըստ գաղղիական ձայնին *entrepreneur*)։ — Ուրիշ արձանագիրներէն ծանուցեալ է որ նրիւ պեանք Նիմացի արհեստաւորաց ընտանիքներէն էին. ըսել է որ այդ մեծագործութիւնն ալ նոյն ընտանեաց պարծանքն է եղեր։ — Ո՛ւր էր թէ նաև մեր ազգային ճարտարապետաց անունները այսպէս 'ի յայտ գային. բայց թէ ոչ իրենց անունները, գոնէ իրենց աւերեալ ձեռակերտները։

Բարիգի կայսերական գրատունը, որուն վրայ յուսամբ առանձին յօդուածով տեղեկագոյնս հմտացունել մեր ընթերցողները, յամաց հետէ 'ի շինութեան է, մասն առ մասն 'ի հիմանց քանդելով զհին չէնքը և զնորն անոր տեղը կառուցանելով։ Անցեալ տարուէն զբաղեալ էին ճարտարապետք 'ի շինութիւն նորոյ ընթերցարանին, որ լ'ոնտոնի չքեղ գմբեթաւոր ընթերցարանին նմանութիւնը կը բերէ կերպով մը, լսեմք որ գլխաւոր մասը լմնցած մնացեր է իրեն զարդերը և կարասիքն յօրինել։ — Քիչ ատենէն ամենահարկաւոր և առձեռն գիրքերը նոր սրահին քովի մատենադարանը փոխադրուին պիտի։ — Շինուելու վրայ են երկաթի ճալիքները գիրքերը տանելու բերելու, ելեքտրական հեռագիրը սպասաւորաց հաղորդելու եղած խնդիրքները։ — Կը յուսացուի որ այս մեծ և գեղեցիկ սրահը, ուր ամենայն հանգստութիւն և դիւրութիւն աշխատողաց և ուսումնաբեզտ անձանց պատրաստուած է, քիչ ատենէն հասարակաց բացուի. գէթ առաջիկայ օգոստոսի 15ին, Գաղղիոյ կայսեր անուան հանդիսական օրը։

Ի շրտմն ըղծից՝ մեծարգոյ Պր. Միքայէլ Մ. Միսանաւրեան Հայկազուն իմաստասէր պաշտօնակալի, կը հրատարակենք առաջիկայ յօդուածը։

Խեղրեմ բոլոր Հայոց հանդիսից խմբագիրներին տպել խրեանց հանդիսից մէջ այս խրեդիրքս։

Ամենախոնարհ խնդիր բոլոր Հայազգի վիճակաւոր առաջնորդներին, հոգեւոր և աշխարհական զանազան ազգային ժողովներին և ընկերութիւններին, գրատան կառավարիչներին և տէրէրին, գրավաճառներին, տպագրատան տէրէրին և կառավարիչներին, օրագիրների ամսագիրների (հանդէսների) տէրէրին և տնօրէններին, մանաւանդ ամենայն ուսումնական և ուսումնասէր հայերին։

Ես միտք ունիմ և աշխատում եմ տպել (եթէ Աստուած աջողի) մէկ ընդհանուր Հայերէն ցուցակ հայերէն լեզուաւ տպած բոլոր գրաւոր աշխատութեանց։ Այսպիսի ցուցակը պէտք է իւրեան մէջ պարունակէ. Ա. Բոլոր ոչր և ինչ ժամանակ և իցէ տպած, հին թէ նոր, հայ մատենաների, օրագիրների, լրագիրների, ամսագիրների, օրացոյցների, գրացուցակների, բրոշիւրների, տպած տետրակների, վայելչագրութեան օրինակների և երաժշտական խաղերի վերնագիրները (մակագիրները), ինչպէս որ ներքեւումը գրած է, օրինակի համար։ Բ. Հայերէն մակագիրներով տպած պատկերների ստորագրութիւնը, զոր օրինակ վարդանայ, Տիգրանայ, Հայկայ և այլն և այլն, նոցա խորհուրդը, մեծութիւնը, հեղինակի և փորագրողի անունը, երբ և ուր տեղ է տպած, ինչ արժէ, ուր տեղից կարելի է գնել։ Գ. Համառօտ պատմութիւնը, տեղեկութիւնները և հասցէները (վերջին հայերէն և գաղղիերէն լեզուաւ), բոլոր անցեալ և այժմեան հայ խմբագրութեանց (հանդիսից, ամսագրից և օրագրից) և տպագրատանց, վեր

ջինը թէ Հայոց և թէ օտարազգի, ուր որ կայ կամ եղել է տպագրութիւն Հայ-
յերէն լեզուաւ: Դ. Գրաւոր և ձեռա-
գիր աղբիւրները, որ տեղից որ կարե-
լի լինի քաղել վերոյիշեալ Ա. Բ. և
Գ. մէջ նշանուած տեղեկութեանց հա-
մար ծանօթութիւնը: Ե. Հասցէքը
բոլոր գրավաճառներին, կամ որոնց
գրատանը վաճառվում են Հայոց գր-
րեանք: Զ. Համառօտ ծանօթութիւնք
և հասցէքը բոլոր Հայոց տղայոց և աղջ-
կաց ուսումնարաններին, թէ մեծերի և
թէ փոքրների:

Այսպիսի ծանօթութեանց մէջը բա-
ւական է որ պարունակուած լինէր ա-
մենայն վարժարանի կամ ուսումնարա-
նի մասին, որքան դասատուն և աշա-
կերտ կայ, ինչ առարկաներ կամ գի-
տութիւններ են ուսանում աշակերտ-
ները, ինչ գիրքերով կամ տետրակնե-
րով (գրքի մականունը կամ տետրակի
շարադրողների անունը). ուր տեղ է
վարժարանը այսինքն գիւղի կամ քա-
ղաքի, գաւառի, նահանգի, փողոցի և
տանտիրոջ անունները, որ թագաւո-
րութեան մէջն է, և որ գլխաւոր քա-
ղաքներից (գիւղի և գիւղաքաղաքնե-
րի ուսումնարանները) որքան Ռուսաց
վերստ է կամ Ֆրանսիայի լիէոյ:

Յուցակը կը տպուի հաշուագրի (դաւ-
թարի) ձևով, օրինակի համար, այս-
պէս.

Աստուածաբանութիւն, կամ պատմութիւն,
կամ քաղաքական մարեմարիկայ.

Ճրագ հոգւոյ. « Ես լոյս եկայ աշխարհ, որ ա-
մեն, ով որ ինձի հաւատայ, խաւարի մէջ չմնայ »:
Յովհաննէս ԺԲ. 46: Երկրորդ տպագրութիւն
Գ. Պոլեո. 'ի Տպարանի Ա. Չըբըի 1856 Ձաճալ,
Երես 36:

Շուշանիկ գուստը մեծին Վարդանայ Հայոց
սպարապետի: Ողբերգութիւն ազգային պատ-
մութիւնից բաժանած Երեք հանգիսի վրայ, գործ
Յակովբայ Կարինեանց, 1860 Թիֆլիզ, 'ի Հայ Տը-
պարանի Գաբրիէլի Մեղրումեանց և Համբար-
ձումայ Էնֆիաճեանց, Ձաճալ (Տ. 8 Երես 75):

Թուաբանութիւն յերկուս գիրս բաժանեալ 'ի
'ի Հայր Սուքիաս վարդապետէ Աղամաեան, 'ի

Հայրապետութեան Տ. Ղուկասու Հայոց Կաթու-
ղեկոսի յամի Տեառն 1781 'ի մարտի 8. և 'ի Թուա-
կանութեան Հայոց ՌՄԼ. 'ի Վէնետիկ, 'ի տպա-
րանի Դեմետրեայ Թէոդոսեանց Ձաճալ, Եր. 521:

Յուցակը կը տպուի մօտ 1200 օրի-
նակ, որ մի կամ երկու օրինակ ձրի ու-
ղարկուի բոլոր Հայ վիճակաւոր առաջ-
նորդներին, վանքերին, ուսումնարան-
ներին, ժողովներին հոգևոր և աշխար-
հական, զանազան ազգային և ուսու-
մական ընկերութեանց, խմբագրու-
թեանց և գրավաճառներին: Տպագրու-
թեան ձևը կը լինի ինչպէս որ 'ի վե-
րոյ նշանակեալ է, և այնպիսի թղթի
վերայ, որ ժամանակով, կամեցողը կա-
րողանայ մեղանով աւելցնել պակասը
կամ ուղղել սխալը: 1, 2, 3, 4 և 5 է-
ջերը կը լինին այն նպատակաւ որ գրա-
վաճառները կամ գրատուն ունեցողնե-
րը և այլն, կարողանան իւրեանց համար
գործածել և 1, 2, 3, և 4 էջերի մէջ իւ-
րեանց անունները կամ ծանօթութիւն
ները նշանակել: Զինի ամենայն բաժան-
մանց, զոր օրինակ Աստուածաբանու-
թեան, զրամագիտութեան, բնագի-
տութեան և այլն և այլն, կը լինի Թո-
ղած 2դ մինչև 8 սպիտակ, անտիպ
թերթ որ մէջը մուծանուին նորատիպ
կամ պակաս գրեանց վերնագիրները:

Որովհետեւ չկայ ոչ մի տեղ մէկ ազ-
գային գրատուն, ուր որ հաւաքուած
լինէր բոլոր հայերէն լեզուաւ տպած
գրեանքը և այլն և այլն, վասն որոյ ես
պարտաւոր եմ զիմել ինդրանօք այն
պատուելի անձանց, միաբանութեանց
և ընկերութեանց, որոնց անունները
յիշել եմ նամակիս ճակատագրումը:

Աղբիւրները հաւաքելիս լաւ կը լի-
նէր հետեւել փոքր 'ի շատէ մէկ կարգի.
զոր օրինակ բաւական կը լինէր աղբիւր-
ները բաժանուէին 12 կարգ. աստուա-
ծաբանութիւն, պատմութիւն, աշխար-
հագրութիւն, բնագիտութիւն, մաթէ-
մատիկա, դաստիարակութիւն, լեզուա-
գիտութիւն, երգեր, թատրոնական
շարադրութիւնք, բժշկականութիւն,
փիլիսոփայութիւն, ճանապարհորդու-
թիւն և խառն գրեանք: Բայց եթէ որ

և իցէ դժուարութիւն պատահի կարգաւ գրելու աղբիւրները, խնդրեմ խառն գրել, ես ինքս կարգի կը դնեմ, մի միայն գրածը լինի մեկնով և պարզ:

Ինչպէս որ յայտնի է հայ տպագրութիւնքը հաստատուեցան 1565 Վենետիկ, յետոյ նոյն տեղ Հարց Մխիթարեանց 1715. 1567 Կ.Պօլիս. 1584 Հրոտ, 1616 Ղէմբերդ, 1624 Միլան, 1633 Փարիզ, 1640 Զուլա, 1660 Ամսդէրտամ (Ամստէրդամ), 1673 Մարսէլ, 1680 Ղէիպցիք, 1690 Պատուա, 1713 Կալկաթա և Մադրաս, 1770 Էլմիս, 1780 Պետերբուրգ, 1790 Նոր Նախիջևան, 1793 Աթաթիւսան, յետոյ Թիֆլիզ, Շուշի և այլն և այլն: Կը ցանկայի որ բոլոր հայ տպագրատանց պատմութեան հետ կարողանայի ցոյց տալ նոցա մէջ տպած գրեանց վերնագիրները և թէ ուր կը գտանուին և քանիօրինակ, այն գրեանցից որոնք տպած են մինչև 1830 թիւը և մանաւանդ որոնք հազուադիւս են:

Նմանապէս հայ հանդիսից պատմութեան հետ շատ կը ցանկայի ցոյց տալ այն նշանաւոր հատուածները կամ շարադրութիւնները, որոնք ազգային գրականութեան մէջ ունին խորհուրդ, առանձին տպուած չեն, այլ կը գտանուին այս կամ այն հանդիսի մէջ: Զորօրինակ, « Կռունկ ամսօրեայ հանդիսի մէջ, 1863 ամի, տպուած են Կարապետ վարդապետ Շահնազարեանցի գաղղիերէն գրած « Երազիր հայոց պատմութիւնի » թարգմանութիւնը, Ժամանակագրութիւնը Պետրոս Դի, Սարգիս Գիլանեանցի: Յովսէփ Կաթողիկոս Արղուութեանցի յիշատակարանը, Արիբէզ և Գիլի և այլն և այլն:

Վէննա և Վենետիկ տպած մատենից ցուցակները ունիմ և չունեցած

Ժանօթութիւնքը նոցա մատենից յոյս ունիմ ստանալ հարց Մխիթարեանց երկու միաբանութիւններից, վասն որոյ կամեցողներուն օգնել ինձ, կը ծանուցանեմ որ Վէննայի և Վենետիկոյ գրեանց ցուցակը չուղարկեն. բաց 'ի դրանից կը խնդրեմ բոլոր հայ գրեանց հանդիսից և այլն ցուցակները և ծանօթութիւնները, ինչպէս որ վերեւ գրել եմ:

Ջէնկերի Bibliotheca orientalis, Վէննայի և Վենետիկոյ Հարց Մխիթարեանց, Էնֆիաճեանցի և Լազարեանց ուսումնարանի ցուցակները ունիմ, նմանապէս գրած աղբիւրներ, որոնք հաւաքել եմ 1865 թուականին ճանապարհորդելու Բէրլին, Վէննա, Վենետիկ, Հռոմ, Պօլիս, Տիֆլիս, Մոսկուա և այլն, բայց դոցա մէջ պարունակուած աղբիւրները բաւական չեն իմ պրօգրամայիս համար:

Շա աւելորդ եմ համարում ասել որքան հարկաւոր է մեզ ամենայն կողմանէ մի այսպիսի տպած ցուցակ, վասն որոյ յուսով եմ, որ ամենայն խելացի հայ, որի սրտումը ուսման կայծը ցանգած չէ և որի խելքը կարող է զանազանել սէր սպիտակից, կ'օգնէ ինձ այս գործի մասին, ըստ չափու կարողութեան:

Յուսայով որ խնդիրքիս կատարողները կը գտանուին նշանակում եմ հասցէս. Միքայէլ Մեսրոպեան Միանսարեանցին, Ռուսիա, քաղաք Պետերբուրգ, Մօյկա ջրանցի վերայ, Պէվչեսկի կամուրջի մօտ, Իւնկերի տանը, բնակարան Թ. 1:

A. M. Miansaroff, Russie. St. Pétersbourg, sur Moyka, près du pont Peutesky, Maison Junker, Cog. N. 1.